Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող «Պայքար հաշմանդամության հիմքով խտրականության դեմ» ծրագրի շրջանակներում մարտի 26-ին, ապրիլի 2-ին և 13-ին «Ունիսոն» ՀԿ-ն անցկացրեց երեք սեմինար ՀԿ-ների, հաշմանդամություն ունեցող կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սեմինարները վարեց ծրագրի ղեկավար Արմեն Ալավերդյանը:
Բանախոսներն էին փաստաբան, Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետ Արա Ղազարյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ Մոնիկա Սարգսյանը և խտրականության ոլորտի փորձագետ
Սերգեյ Հարությունյանը: Անդրադարձ կատարվեց հաշմանդամության հիմքով խտրականության տարբեր ձևերին և դրանց հաղթահարման ուղիներին: Բանախոսները նաև պատասխանեցին մասնակիցների հարցերին: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, որի ընթացքում մասնակիցները կիսվեցին իրենց փորձով և մտահոգություններով:

*Սեմինարներն իրականացվեցին «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրամիության և Եվրախորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից:*
*Սեմինարների ընթացքում հնչեցրած տեսակետները չեն արտահայտում որևէ կողմի պաշտոնական կարծիքը:*

On March 26, April 2 and 13, Unison NGO conducted three seminars for NGOs, women with disabilities and people with disabilities within the framework of the Council of Europe-funded project "Combating Discrimination on the Grounds of Disability in Armenia." The seminars were moderated by the project director Armen Alaverdyan.
The speakers were Ara Ghazaryan, lawyer, international expert of the Council of Europe, Monica Sargsyan, Head of the Department for the Protection of the Rights of Persons with Disabilities of the RA Human Rights Defender's Office and anti-discrimination expert Sergey Harutyunyan. Reference was made to different forms of disability discrimination and ways to overcome them. The speakers answered the participants' questions. An exchange of views took place, during which the participants shared their experiences and concerns.

*The seminars took place as part of the project “Strengthening access to justice through non-judiciary redress mechanisms for victims of discrimination, hate crime and hate speech in Eastern Partnership countries”, which is co-funded by the European Union and the Council of Europe and implemented by the Council of Europe.*
*The views expressed during the seminars can in no way be taken to reflect the official opinion of either party.*